ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական ուղերձը Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ

Սիրելի՛ մայրեր, կանայք, քույրեր եւ դուստրեր, դուստրեր,

Շնորհավորում եմ ձեզ Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ:

Հայ Առաքելական Եկեղեցին ապրիլի 7-ին նշում է Ս.Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը: Սրբազնագույն այս տոնը մեկտեղվում է Մայրության եւ գեղեցկության օրվա հետ:

Հայ իրականության մեջ մեծագույն հպարտություն են մայրը եւ մայրությունը՝ իբրեւ աստվածատուր մեծագույն պարգեւ:

Սիրելիներս, դուք ամփոփում եք կյանքի արարման խորհուրդը: Մենք հպարտանում ենք ձեզանով, եւ անսահման է ձեր հանդեպ ունեցած մեր երախտագիտությունը:

Մայրությունն ինքնին գեղեցկություն է, քնքշություն եւ անմնացորդ նվիրում: Այն իր մեջ պարունակում է արարման, հայրենասիրության, ազգապահպանության մեծագույն ներշնչանքը:

Թանկագին հայուհիներ, շնորհավոր ձեր տոնը: Մաղթում եմ ձեզ լիարժեք երջանկություն, գեղեցիկ եւ ներդաշնակ կյանք: